



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2014 թվականի N 79-Ա

ք. Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014
ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ,
ՍԵՆՏՐՈՒՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,
ՀԵՏՆԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 16-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «դ», «ե» կետերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ կետի *որոշում էմ*

Կոտայքի մարզի տարածքում 2014 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով

1. հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքում 2014 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Մարզի համայնքների ղեկավարներին՝
մինչև 2014 թվականի մարտի 25-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել
 - 1) համապատասխան միջոցառումների պլան,
 - 2) տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի,

3) առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) ուսումնասիրել համայնքների ղեկավարների կողմից ներկայացված միջոցառումների պլաններն ու տեղեկատվությունները և մինչև 2014 թվականի մարտի 31-ը ներկայացնել տեղեկատվություն՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքում 2014 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով»>> նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակներում գործելու պլանը բերել պատրաստական վիճակի և անհրաժեշտության դեպքում պլանով նախատեսված միջոցառումները դնել գործողության մեջ:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Ալբերտ Ղազարյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ